

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (23-րդ տարի)

Այս թիւով.....

Խմբագրական՝ Վերամուտ 44 Էջ 2

Սեպտեմբեր ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 3-5

Գիտէի՞ր թէ

Խաչվերաց

Սուրբ Գեորգ Զօրավար

Նիկիոյ Ժողով

Նաւակատիք

Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Կաթողիկոսի
Հովուապետական այցելութիւնը
Գանատա - 2023 Էջ 6-8

Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Վեհափառ
Հայրապետը «Ս. Մեսրոպ Մաշտոց
Շքանշան» շնորհեց Ս. Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Տնօրէնին Էջ 9

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 10-13

43-րդ տարեշրջանի Ամավերջի
Հանդէս Էջ 14-19

Վերամուտ 2022-23 Էջ 20

Ամսուան Համարը

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան,
արգելք մի ըլլաք անոնց, որովհետեւ
այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը»:

Աւետարան ըստ Մարկոսի 10.14

Սեպտեմբեր 2023 (ԼԱ տարի թիւ 1)



**Կ... ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ
ԴՊՐՈՑ**

Խաչքարի Հեղինակ՝
Ժողովրդական Վարպետ
Ռուբեն Նալբանդյան

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Վերամուտ 44

Մեր ժողովուրդի ամենէն կարեւոր հարստութիւնը մեր բարոյական դիմագիծին առողջութիւնն է եւ երբ մեր նոր սերունդը հայ քրիստոնէական դաստիարակութեամբ եւ մեր մայրենի եկեղեցւոյ մաքուր կաթով չի սնանիր, կը նշանակէ թէ արդէն բարոյական այլասերումի վտանգը կը սպառնայ մեզի:

Պատմութիւնը կը վկայէ թէ՛ աշխարհասփիւռ մեր գաղութներուն երկարակեցութիւնը կախեալ է ոչ թէ տուեալ գաղութի նիւթական պայմաններէն, այլ անոր հոգեւոր արժէքներէն ու բարոյական սկզբունքներէն:

1980 Սեպտեմբերի 14-ին ծնունդ առած Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը կը պատրաստուի իր 44-րդ յաջորդական տարեշրջանին:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին, մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումին հետեւանքով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին, հիմնականօրէն Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Մաշտոցի Արձագանգ»ի 31-ամեակին ընդմէջէն պիտի շարունակենք մեսրոպատառ գրութիւններ ներկայացնել մեր աշակերտներուն, մանաւանդ համացանցին վրայ: Մեր կայքէջը, www.sourphagop.org-ը իր 23-րդ տարին պիտի ամբողջացնէ Սուրբ Յակոբի օրը:

Այս տարի եւս, օգտագործելով զանազան միջոցներ, պիտի շարունակենք սորվեցնել մեր աշակերտներուն.

- Հայ բարքեր եւ կենցաղ
- Հայկական տօներ ու սովորութիւններ
- Երգեր եւ շարականներ
- Հայերէն Աստուածաշունչ բանալ եւ կարդալ
- Հայ եկեղեցւոյ պատմութիւն
- Ձեռային աշխատանքներ:

Այս բոլորը՝ Հայ Քրիստոնէայ նկարագիր մը կերտելու համար:

Թող Բարձրեալն Աստուծոյ աչքն ու աջը հովանի ու առաջնորդ ըլլան Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին, որպէսզի մեր ժողովուրդի նոր սերունդի զաւակները «պարարտ հողի մէջ աճելով պտուղ տան, մէկի տեղ երեսուն, մէկի տեղ վաթսուն, կամ մէկի տեղ հարիւր»:

«Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը մեր բոլորին հետ ըլլան: Ամէն»:

Սեպտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 9	Նիկիոյ Ս. Ժողովի 318 Հայրապետները
Կիր. 10	Բարեկենդան Ս. Խաչի Պահոց
Եշ. 8	Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի յԱննայէ
Շբթ. 16	Նաւակատիք Սուրբ Խաչի
Կիր. 17	Տօն Վերացման Ս. Խաչին (Խաչվերաց)
Բշ. 21	Յիշատակ Մեռելոց
Շբթ. 21	Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան օր
Շբթ. 24	Սուրբ Գեորգ Զօրավար

Պահքի Օրեր: 1,6,8, 11-15, 20,22, 25,27,29

Գիտէի՞ր թէ՛

1. Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կ'ունենայ Թափօր-Անդաստանը:
2. Հայց. Եկեղեցոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրինել զանազան միրգեր:
3. Պօղոս Առաքեալ կը գրէ. «Գալով ինծի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:
4. Հայց. Եկեղեցին ունի Ս. Խաչի 3 տօներ եւս. Գիւտ Խաչի, Վարագայ Խաչ, Երեւման Խաչ:
5. Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի վերամուտը ամէն տարի Խաչվերացին տեղի կ'ունենայ:

Կիրակի՝ 10 Սեպտեմբեր 2023-ին

տեղի պիտի ունենայ մեր 2023-24 Տարեշրջանի (44-րդ)

Նոր Աշակերտներու Արձանագրութիւնը

(3 - 16 տարեկաններու համար)

Կիրակի՝ 17 Սեպտեմբեր 2023

Արձանագրութիւն եւ Վերամուտ

Կը խնդրուի դպրոց ներկայանալ ժամը 10:30-էն սկսեալ Ձեր զաւկին/զաւակներուն հետ արձանագրութեան համար:

Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի ժամը 10:30 – 1:00



ԽԱՉՎԵՐԱՑը Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն վերջինն է: Ան Խաչին նուիրուած տօներուն մէջ ամենակարևորն է, որովհետև նուիրուած է խաչին գերութիւնէն վերադարձին, անոր բարձրացման և փառաբանութեան պատմական յիշատակին: Հայաստանեայց Եկեղեցին Խաչվերացը կը տօնէ Սեպտեմբերի 11-17 ժամանակահատուածին հանդիպող Կիրակի օրը, իսկ տօնի յաջորդ օրը մեռելոց է:

610 թ. պարսից Խոսրով արքան մեծաքանակ զօրքով կը յարձակի Բիզանդական կայսրութեան վրայ: Սկզբնական յաջողութիւններէն ոգևորուած՝ պարսկական զօրքերը 614 թ. կը մտնեն Երուսաղէմ: Շատերը կը սպաննեն եւ շատերն ալ գերի կը վերցնեն: Վերջիններուն մէջ էր նաև Երուսաղէմի Զաքարիա հայրապետը: Բայց պարսիկներն այսքանով չեն բաւարարուիր. կը մտնեն Ս. Յարութեան տաճար և գերի կը վերցնեն այն տեղ պահուող Աստուածընկալ Ս. Խաչը, որ Դ. դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մօր Հելինէի ձեռքով գտնուէր և պաշտամունքի առարկայ էր դարձեր բոլոր քրիստոնէաներու համար:

628 թ. Բիզանդական զօրքերը Հերակլ կայսեր գլխաւորութեամբ խաչափայտը վերադարձնելու համար կը պատերազմին պարսիկներու դէմ: Բիզանդական զօրքին կ'օժանդակէ նաև հայկական զօրախումբը Մծեծ Գնունիի գլխաւորութեամբ: Տիրոջ օգնութեամբ Բիզանդացիները յաղթանակ կը տանին:

Ս. Խաչը հանդիսաւոր թափօրով կը տեղափոխուի հայոց Կարին քաղաքը: Իսկ Կարինէն զայն կը տեղափոխեն Կ. Պոլիս, ապա Երուսաղէմ: Գերեզարդի ճանապարհին Տիրոջ խաչափայտը կը բարձրացուէր և ցնծութեան առիթ կ'ըլլար ժողովուրդին համար:

Խաչը քրիստոնէաներու համար Աստուծոյ զօրութիւնն է ու պարծանքներու պարծանքը, որուն վրայ իր անմեղ արիւնը թափեց Քրիստոս, տալով մեզ յաղթութեան զէնքը՝ ընդդէմ սատանային ու անոր խաբկանքներուն: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրը մարդկութեան հանդէպ, և խաչը դարձաւ մեզի համար յոյսի, սիրոյ և փրկութեան երաշխիք:

Սուրբ Գէորգ Զօրավար

Խաչվերացէն 13 օրեր ետք եկող շաբաթ օրը Ս. Գէորգ է: Ան նահատակուած է Նիկոմեդիոյ մէջ մօտաւորապէս 303 թուականին:

Հասակ առած է քրիստոնէայ ընտանիքի մէջ: Երբ Հռոմէացի Դիոկղետիանոս կայսրը (284 - 305) հրովարտակ կը հրատարակէ քրիստոնէաներուն դէմ, Գէորգ զօրավարը կը պատռէ Նիկոմեդիա քաղաքի հրապարակին վրայ կախուած այս արքունական հրամանը:

Այս պատճառով կը չարչարուի եւ կը նահատակուի, որովհետեւ կը մերժէ ուրանալ իր քրիստոնէութիւնը:

Բազմաթիւ աւանդութիւններ հիւսուած են Ս. Գէորգի մասին: Ասոնցմէ ամենածանօթը այն է որ Գէորգը վիշապ մը սպաննելով կոյս մը ազատած է եւ այդ պատճառով կ'ընդունուի որպէս վիշապասպան սուրբ:

Անգլիացիները իրենց պահապան սուրբը կը համարեն Ս. Գէորգը (Saint George): Սուրբ Գէորգի անունով եկեղեցիներ ունին Հայերը եւ եւրոպական ժողովուրդները:



Նիկիոյ Ժողով

Արիոս Աղեքսանդրացի, իմաստասիրական հմտութեամբ ծանօթ անձ մըն էր, որ մինչեւ իսկ հայրապետութեան յաջորդելու փափաքեցաւ: Այն ժամանակ Յիսուսի անձին վրայ խնդիրներ կային եւ Արիոս ալ սկսաւ պաշտպանել այն տեսակետը թէ Յիսուս Քրիստոս չէ մարդացեալ Որդին Աստուծոյ, այլ գերագոյն արարած մը, եւ թէ իրեն տրուած Որդի Աստուծոյ կոչումը բառացի իմաստով առնելու չէ: Աղեքսանդր հայրապետ Աղեքսանդրիոյ գաւառական ժողովներու մէջ, 312-ին եւ 319-ին, հերքեց Արիոս երեցին կարծիքը, որ սակայն իրեն պաշտպան եպիսկոպոսներ ալ ունեցաւ եւ Եւսեբիոս արքեպիսկոպոսը Նիկոմիդիոյ մէջ տեղի ունեցած ուրիշ ժողովով մը արձակեց Արիոսը: Աղեքսանդրիոյ ժողովներուն դատապարտութենէն: Երբ որ վեճերը ընդհանրացան եւ եկեղեցւոյ մէջ հակառակութիւնները սաստկացան, Կոստանդիանոս կայսրը ուզեց խնդիրը ընդհանուր ժողովի մը մէջ լուծել եւ բոլոր քրիստոնէայ աշխարհի եպիսկոպոսները հրաւիրեց Նիկիա քաղաքը 325-ին, ուր ժողովը բացուեցաւ Յունիս 19-ին: Հրաւիրուած էին նաեւ Տրդատ եւ Գրիգոր որոնք կամ չուզելով, կամ չկրնալով անձամբ երթալ, Արիստակէսը իրենց փոխանորդ նշանակեցին, եւ իրենց կարծիքին ու դաւանութեան յայտարարութիւնն ալ գրաւոր յանձնեցին անոր եւ ճամբայ հանեցին (ԽՈՐ. 176): Արիստակէս եղաւ Նիկիոյ 318 հայրապետներէն մին, որոնք միայն քանի մը հոգիի տարաձայնութեամբ, Արիոսական վարդապետութիւնը դատապարտեցին եւ Արիոսը նզովեցին: Կոստանդիանոս ալ զայն աքսորեց: Նիկիոյ ժողովին մասնակցած հայրապետներու անուանացանկին մէջ կը կարդացուի Հայոց Մեծաց Արիստարքոս կամ Արիստակիսոս կամ Արսափիոս անունով եպիսկոպոսը, որ մեր Արիստակէսն է, թէպէտ օրինակէ օրինակ անունը աղաւաղուած է: Յատուկ գործունէութեան կամ բանախօսութեան յիշատակ մը չունինք, բայց արդէն այնչափ եպիսկոպոսներուն մէջէն միայն քանի մը պայքարողներու անունները կը տեսնուին ժողովի ատենագրութեանց մէջ: Արիստակէս ժողովէն ուղղակի վերադարձաւ Վաղարշապատ արժանահաւատ բանիւ, եւ քսան կանոնեալ գլխովք ժողովոյն (ԽՈՐ. 177): Գրիգոր ուղղափառ հաւատքի յաղթանակին վրայ ուրախանալով ընդունեց եւ հռչակեց Նիկիոյ կանոնները, «եւ սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու» (ԽՈՐ. 177):

Մաս տուողը կ'ըսէ. «Մասն եւ բաժին եղիցի Սուրբ Պատարագիս»
 Մաս ստացողը կ'ըսէ. «Բաժին իմ Աստուած Յաւիտեան»

Նաւակատիք (նոր կերտել, նոր շինել) նորաշէն տաճարի, եկեղեցւոյ, ամէն նորի բացման, տարեդարձի ու նուիրագործութեան հանդէս: Նաւակատիք է նոր աւարտած եկեղեցւոյ առաջին նուիրագործութիւնը, ինչպէս նաեւ՝ նուիրագործութեան տարեդարձը: Հայ եկեղեցին նաւակատիքները սկսած է կատարել կամ յիշատակել մեծահանդէս տօներու նախընթաց օրերուն: Նաւակատիքով պահքի խստութիւնը կը մեղմացուի՝ առանց զայն ամբողջովին վերացնելու, այսինքն՝ մսեղէնը խստիւ արգիլելով՝ կը ներուի ձկնեղէնի ու կաթնեղէնի կիրառութիւնը Պատարագի մատուցումէն ետք:

Այդպէս է նաև Հայ եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներու նախընթաց օրերուն: Այսինքն՝ Վարդավառի, Աստուածածնի Վերափոխման ու Խաչվերացի նախընթաց շաբաթ օրերուն, առաւօտեան Պատարագէն ետք, իսկ Ս. Ծննդեան ու Ս. Զատիկի ճրագալոյցներուն, երեկոյեան Պատարագէն յետոյ կաթնեղէն ու ձկնեղէն գործածելը նոյնպէս Նաւակատիք կը նշանակէ:

Նաւակատիքը իբրև առանձին տօն կը նշուի Խաչվերացի տօնի նախընթաց շաբաթ օրը, 4-րդ դարու բիզանդական կայսրուհի Հելինէի նախաձեռնութեամբ Երուսաղէմի Սուրբ Յարութեան մեծ տաճարը շինուելէն ետք զայն նուիրագործելու և օծելու տարեդարձի օրը, որ ամբողջ քրիստոնէայ աշխարհի համար կարելոր յիշատակ է:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հովուապետական Այցելությունը - 2023

Հինգշաբթի՝ 1 Յունիս 2023-ին, Սուրբ Յակոբ Կիրակնորեայ Դպրոցը բերաւ իր բաժինը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցիէն ներս կայացած Կանոնական աղօթքին եւ Աջահամբոյրին: Մեր երկրորդականի աշակերտներ Մհեր Ստեփաննեան (Խաչ), Յարութ Չուլճեան եւ Զաւէն Չուլճեան (մոմակալ), Տնօրէնը (ամպիովանի եւ յանձնախումբի անդամ) եւ մեր երկրորդականի ուսուցիչներէն Պրն. Մհեր Պանքեանը (Քշոց)մաս կազմեցին թափօրին: Երկրորդականի պատասխանատու Պրն. Առէն Պապիկեան եւ Երգի պատասխանատու Պրն. Սեւակ Պապիկեան մաս կազմեցին Դպրաց Դասի երգչախումբին: Շատ մը ուսուցիչներ եւ աշակերտներ (իրենց Կիրակնորեայ Դպրոցի T-Shirt ներք հագած որոնց ետեւը «Հաւատք Յոյս Մեր» գրուած է) ներկայ եղան արարողութեան եւ աջահամբոյրին: «Աստուած Օգնական՝ Վեհափառ տէր»:





Armenian Prelacy of Canada

14m · 🌐

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ
ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

«ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԷՐ» ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ
ՆՇԱՆԱԲԱՆԸ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ






Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «Ս. Մեսրոպ Մաշտոց Շքանշան» շնորհեց Ս. Յակոբ Կիրակնորեայ Դպրոցի Տնօրենին



«...Արդարեւ, մեր փոքրիկներուն ու պատանիներուն քրիստոնէական դաստիարակութիւնը իրենց ֆիզիքական սնունդի կողքին, աւելի քան անհրաժեշտութիւն մըն է՝ առողջ սերունդներ պատրաստելու առաքելութեան մէջ:...»



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանը: Մարկոս 10.14

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն,
արքայութիւնը

----- ըսաւ.

«Ձգեցէք որ ----- ինծի գան, ----- մի՛
ըլլաք անոնց, որովհետեւ ----- է Աստուծոյ
-----»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին հիմնուեցան
«Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ
Դպրոցները».

ա. 1900

բ. 1929

գ. 1979

դ. 1980:

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ Մոնթրէալի
Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը.

ա. 1900

բ. 1929

գ. 1979

դ. 1980:

3.- Այս տարի «Մաշտոցի Արձագանգ»ի
քանի՞ երորդ տարեդարձն է:

ա. 6

բ. 31

գ. 17

դ. 30:

4.- Աստուածաշունչը կը բաղկանայ
երկու մասերէ. առաջին մասը
կը կոչուի «--- Կտակարան» իսկ
երկրորդը՝ «Նոր -----»:
Առաջին մասը գրուած է Քրիստոսէ ---
-- իսկ երկրորդը ----- ետք:

5.- Ի՞նչ կը կոչուի այն տաղաւարը
որ կը տօնենք Սեպտեմբեր ամսուան
ընթացքին.

ա. Խաչվերաց

բ. Սուրբ Ծնունդ

գ. Սուրբ Զատիկ

դ. Սուրբ Աստուածածնի

Վերափոխում:

6.- Հետեւեալ սուրբերէն որո՞ւն տօնը
կը տօնենք Սեպտեմբերին.

ա. Սուրբ Սարգիս

բ. Սուրբ Գեորգ

գ. Սուրբ Թադէոս

դ. Սուրբ Պետրոս:

7.- Ի՞նչ կը կոչուի խաչին
կեդրոնական մասը.

-----:

8.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ
մկրտուեցաւ.

ա. 6

բ. 32

գ. 30

դ. 33:

9.- Ամբողջացո՞ւր Հայց. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին առաջին 4 տողերը.

Կիրակնօրեայ Սուրբ յարկին
մենք ----- ենք լուսաբաղձ
Կայծերու պէս -----
Յայտած՝ սրտէն պերճ -----:

10.- Ամբողջացո՞ւր Հայց. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին երկրորդ 4 տողերը.

Ուստի քալենք -----,

Ո՛վ հարազատ զարմ -----

----- գընացքով

Լոյս-աղբիւրին -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞վ է ներկայիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսը.

- ա. Սահակ Բ. Խապայեան
- բ. Արամ Ա.
- գ. Գարեգին Ա.
- դ. Գարեգին Բ.:

2.- Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց
Կաթողիկոսը.

- ա. Սահակ Բ. Խապայեան
- բ. Արամ Ա.
- գ. Գարեգին Ա.
- դ. Գարեգին Բ.:

3.- Ըստ Ա. Կորնթացիներուն 13րդ գլուխին
երեք հիմնական շնորհներն են Հաւատք,
Յոյս եւ Սէր, եւ այս երեքն ամենէն մեծն է...

- ա. հաւատքը
- բ. յոյսը
- գ. սէրը
- դ. Աստուածային հիմնական
շնորհները թիւով 4 են:

4.- Վերջին ընթրիքի ընթացքին Յիսուս
հաստատեց Հաղորդութեան խորհուրդը:
Աւագ շաբթուան ո ը օրն էր այդ.

- ա. Երկուշաբթի
- բ. Ուրբաթ
- գ. Հինգշաբթի
- դ. Չորեքշաբթի:

5.- Սուրբ Ծնունդի մաղթանքն է.-
Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
օրհնեալ է...

- ա. Քրիստոսի Ծնունդը
- բ. Յայտնութիւնը Քրիստոսի
- գ. Յարութիւնը Քրիստոսի
- դ. Անունը Քրիստոսի:

6.- Պատարագի ընթացքին ո՞վ
(որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս
ի մէջ մեր յայտնեցաւ...».

- ա. Պատարագիչը
- բ. Սարկաւազը
- գ. Քահանան
- դ. Դպիրները:

7.- Ս. Պատարագի ընթացքին Ողջոյն
տուողը կ'ըսէ: «Քրիստոս - մէջ ---
յայտնեցաւ»:

8.- Ս. Պատարագի ընթացքին ողջոյն
ստացողը կը պատասխանէ. «-----
է ----- Քրիստոսի»:

9.- Հինգ տաղաւարներն են.-Ս.
Ծնունդ, Ս. Զատիկ, Այլակերպութիւն,
Վերափոխութիւն Ս. Աստուածածնի եւ

....

- ա. Մեռելոց
- բ. Խաչվերաց
- գ. Ծաղկազարդ
- դ. Համբարձում:

10.- Ս. Զատիկէն 40 օրեր ետք կը
տօնենք.

- ա. Համբարձում
- բ. Երեւում
- գ. Այլակերպութիւն
- դ. Յայտնութիւն:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

Ամբողջացո՛ւր:

1.- ----- կը կոչուի եկեղեցւոյ արեւմտեան բաժինը որ տաճարէն բաժնուած է պատով ու դուռով, որուն մէջ կը կենային ապաշխարողները որոնք պատրաստ չէին հաղորդութիւն ստանալու:

2.- 325 թուականի Նիկիոյ ժողովին Հայաստանեայց եկեղեցւոյ ներկայացուցիչն էր, - - - - - ր Քրիզոստոմոս Լուսաւորչի որդին:

3.- 325 թուականին գումարուած Նիկիոյ ժողովին մասնակցեցան - - - հայրապետներ (կամ անոնց ներկայացուցիչները):

4.- Առաջին տիեզերական ժողովը տեղի ունեցաւ - - - - - մէջ, - - - թուականին :

5.- Խաչվերացը կը տօնենք Սեպտեմբեր - - ի ամենէն մօտ գուգադիպող Կիրակի օրը:

6.- Հայաստանեայց եկեղեցւոյ խաչի տօներն են.

ա. - - - - խաչի
բ. - - - - - խաչ
գ. - - - - - խաչ
դ. Խ - - - - -:

7.- Խաչվերացէն 13 օրեր ետք Ս. - - - - - ին տօնն է, եւ յաջորդ օրը - - - - - Սուրբ Խաչ է:

8.- Ըսէ՛ մէկ բառով՝ նոր կերտել, նոր շինել

9.- Ամբողջացո՛ւր: Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կ'ունենայ -----:

10.- Ամբողջացո՛ւր. Հայաստանեայց Եկեղեցւոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրինել զանազան -----:

11.- Ո՞վ գրած է:
«Գալով ինծի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:

ա. Ս. Պօղոս Առաքեալ
բ. Ս. Պետրոս Առաքեալ
գ. Ս. Յովհաննէս Առաքեալ
դ. Ս. Թադէոս Առաքեալ

12.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս. Կոյս Մարիամի ծննդեան տօնը.

ա. Սեպտեմբեր 8
բ. Օգոստոս 8
գ. Յունուար 8
դ. Հոկտեմբեր 8:

43-րդ Տարեշրջանի Ամավերջի Ջանդխտ



21 Մայիս 2023-ին, կեսօրէ ետք ժամ 1:30-ին, տեղի ունեցաւ Սուրբ Յակոբ Առաքելական եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի 2022-2023 տարեշրջանի ամառական հանդէսը:

Հայ համայնքի զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ծնողներ եւ ազգայիններ, հաճոյքը ունեցան հետեւելու խնամքով պատրաստուած գեղեցիկ յայտագրի մը, որ եկաւ իր գործադրութեամբ, փաստելու մէկ կողմէ վարժարանի ուսման բարձր մակարդակը եւ միւս կողմէ հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ազգային դիմագիծը:





Հայաստանեայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոց

Հիմնաւ 1980, Մոնթրէալ

director@sourphagop.orgwww.sourphagop.org**2022-23 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՍ**

Կիրակի՝ 21 Մայիս 2023, Ժամը 1:30 կ.է. Բաստրմաճեան Սրահ

ՅԱՅՏԱԳԻՐ

Հայր Մեր (յոտնկայս)

Իմաստութիւն Հօր, Յիսուս... (յոտնկայս)

զԳործս ձեռաց մերոց... (յոտնկայս)

Մաղթերգ՝ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու

Աշակերտութիւն

Աշակերտութիւն

Աշակերտութիւն

Երկրորդականի Ներկայացում

Երկրորդական Գ. եւ Դ.

Յարութ Չուլճեան

Միւր Ստեփանեան

Մեակ Իսթիպալ

Բացման Խօսք

Ալիք Արշակեան եւ Գրիգոր Պէքարեան (Երկր. Դ.)

Երկրորդական Ա. եւ Բ.

Նշան Պէքարեան

Զաւէն Չուլճեան

«Հայր մեր» աղօթք

Մանկապարտէզ

Տնօրէնի Խօսք

Թորոս Պապիկեան

«Տէր իմ Աստուած» աղօթք

Նախ. Ա. Բ.

Եկեղեցին Հայկական

Նախ. Գ., Դ.

Վկայականներու եւ Վկայագրերու Բաշխում

Հաւատարմք

Նախ. Ե., Զ.

Նախակրթարան

Երգչախումբ

Որք զարդարեցին

Նայեաց սիրով

Սուրբ Աստուած

Ամէն Հայի

Խաչին զինուոր

Այրուրբն

(Նախ. Գ. Դ. Ե. Զ. եւ Երկր.)

(Նախ. Գ. Դ. Ե. Զ. եւ Երկր.)

(Նախակրթարան եւ Երկրորդական)

(Նախակրթարան եւ Երկրորդական)

(Մանկապարտէզ, Նախ. եւ Երկր.)

(Մանկապարտէզ, Նախ. եւ Երկր.)

Հոգևոր Հովիտի Խօսք

Տէր Գառնիկ Աւ. Քինյ Գոյունեան

ԿԻՆԻԿԻԱ

Ուսուցիչներ, Աշակերտներ եւ Ներկաներ



Յայտագիրը, խորքին մէջ բաժնուած էր երկու մասի: Առաջին մասով վարագոյրը բացուեցաւ վարժարանին աւելի քան 60 աշակերտներու խումբին դիմաց, որ իր Տէրունական աղօթքով եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարաններու մաղթերգով բացումը կատարեց հանդէսին. ապա մանկապարտէզէն մինչեւ երկրորդական դասարանի աշակերտներուն գործադրութեամբ շարունակուեցաւ յայտագիրը, ուր աշակերտները իրենց աղօթքներով, սաղմոսներով, ոտանաւորներով, երգերով եւ վարժարանին երգչախումբին մասնակցութեամբ, ներկաներուն ներկայացին իրենց միամեայ տարեշրջանի ձեռքբերած կարողութիւններն ու գիտութիւնը, ստեղծելով հոգեպարար եւ



բեմ-հանդիսատես յարաբերական ջերմ մթնոլորտ մը: Ամէն անգամ ծափողջիւններով, անոնք արժանացան ներկաներու անխառն գնահատանգին եւ քաջալերանքին:





Անցնող տարեշրջանին, ամենամեծ յաջողությունը եղած է երկրորդականի դասարաններու դասաւանդությունը ուր հիմնական նպատակը եղած է ապագայ ուսուցիչներու պատրաստությունը:

Արդարեւ յայտագրին յաջորդ բաժինը պատրաստուած եւ գործադրուած էր այդ աշակերտներու ջանքերով: Այս բաժինով երկրորդականի աշակերտներ, երկրորդականի դասապահ մը ներկայացուցին հանդէսի բոլոր ներկաներունը որուն ընդմէջէն ներկաները ծանօթացան դասապահի մը ընթացքին գործադրուող բազմատեսակ ձեւերն ու ծրագիրները: Ներկայացումէն ետք, հանդիսատեսները առիթը ունեցան, «աշակերտներ»ու պէս KAHOOT-ով պատրաստուած հարցումներու պատասխանելով գնահատելու իրենց գիտելիքները:





Վարժարանի տնօրենը իր խօսքին մեջ յակիրճ կերպով ըրավ վարժարանին պատմականը, վեր առնելով անոր զարգացման ընթացքը եւ շեշտը դնելով հետապնդած նպատակին՝ ստեղծել միջավայր մը, ուր երեխան, պատանին ճանաչնայ իր քրիստոնեայ արմատները եւ զանոնք պահելու անհրաժեշտութիւնը:

Յայտագրի յաջորդ կէտը վկայականներու բաշխումն էր, որ կատարուեցաւ Տէրիօր եւ պրն. տնօրէնին ձեռամբ: Նախակրթարանի 3 աշակերտներ ստացան իրենց համապատասխան վկայականները:

Փակման խօսքն ու աղօթքը կատարեց տէր Գառնիկ Գոյունեան, որ ըսաւ թէ Աւետարանը ներշնչման աղբիւր է եւ մարտահրաւէր կու տայ ճանչնալու եւ տէր կենալու մեր ազգային, կրօնական արժէքներուն, աւելցնելով, որ Կիրակնօրեայ վարժարանը մէկ մասնիկն է եկեղեցիին եւ անոր առաքելութեան, ուրկից կը բխի եւ կը հիմնաւորուի անոր կարեւորութիւնն ու դերակատարութիւնը ամէն հայ ընտանիքի մէջ: Տէրհայրը հանդէսը փակուեցաւ Պահպանիչով եւ ներկաներու եւ ուսուցչական կազմի մասնակցութեամբ Կիլիկիա երգեցողութեամբ:

Տնօրէնութիւնը հիւրասիրեց ներկաները, որոնք մեկնեցան գոհունակ եւ խաղաղ սրտով:





Կիրակի՝ **10 Մեպտեմբեր 2023**-ին

տեղի պիտի ունենայ մեր 2023-24 Տարեշրջանի (44-րդ)

Նոր Աշակերտներու Արձանագրութիւնը

(3 - 16 տարեկաններու համար)

Կիրակի՝ **17 Մեպտեմբեր 2023**

Արձանագրութիւն եւ Վերամուտ

(3 - 16 տարեկաններու համար)

Կը խնդրուի դպրոց ներկայանալ ժամը 10:30-էն սկսեալ Ձեր զակին/
զակներուն հետ արձանագրութեան համար:

Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի ժամը 10:30 – 1:00

Հետեւեցէ՛ք մեզի

<http://www.sourphagop.org/>



[Sourphagop.org](http://www.sourphagop.org/)



[sh_sundayschool](https://www.instagram.com/sh_sundayschool)



[SH SundaySchool](https://www.pinterest.com/SundaySchool)



514-513-4224

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին՝

Թորոս Պապիկեան